


Աղամյան Կառլեն Գրիգորի (ծննդյան 70-ամյակի կապակցությամբ)



2007 թ. հունվարի 19-ին լրանում է Հայաստանի սրտաբանների ասոցիացիայի նախագահ, Հայաստանի Հանրապետության սրտաբանության ԳՀԻ տնօրեն, Հայաստանի Հանրապետության գլխավոր սրտաբան, Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի ակադեմիկոս, Կառլեն Գրիգորի Աղամյանի ծննդյան 70-ամյակը:

Ֆունդամենտալ և գործնական սրտաբանության ասպարեզի ակնառու մասնագետ, փայլուն կլինիցիստ, առողջապահության փորձառու կազմակերպիչ և գիտնական Կառլեն Աղամյանը մշտապես զբաղվում է սրտաբանության կարևորագույն հարցերով:

Ծնունդով գյումրեցի երիտասարդի կյանքի ուղին սկսվել է 1959 թ. Երևանի բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը ավարտելով և զինվորական բժշկի աշխատանքի անցնելով: Եվ իսկ և սիրով ընտրված մասնագիտությունը մշտապես պահանջում էր լիակատար ինքնանվիրում և ինքնահաստատում:

Սրտաբանության և սրտային վիրաբուժության ԳՀԻ ասպիրանտուրա ընդունվելը (1962 թ.) մեկընդմիջտ ոլորտից նրա հետագա ճակատագիրը բուժել մարդկանց սրտերը: Այստեղ տաղանդավոր և աշխատասեր երիտասարդը զարգացնում է իր ստեղծագործական հնարավորությունները և անցնում է փայլուն ճանապարհ՝ կրտսեր գիտաշխատողից

մինչև ինստիտուտի տնօրեն (1979 թ.), բժշկական գիտությունների դոկտոր, Հայաստանի Հանրապետության գլխավոր սրտաբան, Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի ակադեմիկոս: Այս պահից անբաժանելի են դառնում նրա մեջ բժիշկը և գիտնականը:

Տարիների հեռվից նրան են ուղղված հազարավոր փրկված մարդկանց շնորհակալական հայացքները: Այդ մարդկանցից յուրաքանչյուրին փրկելու համար տրվել է եռանդ, գիտելիք և սեփական սրտի ջերմությունը:

Կառլեն Աղամյանի մասնագիտական հետաքրքրությունների շրջանակը լայն է: Դրանք սկսվել են սրտի բնածին ախտների հետ կապված հետազոտման ու բուժման մի շարք խնդիրների լուծմամբ, ինչը 1971 թ. ավարտվեց «Սրտամկանի ֆունկցիոնալ վիճակը գունատ տիպի բնածին ախտների ժամանակ վիրահատության ցուցումների և հակացուցումների լույսի ներքո» դոկտորական թեզի պաշտպանությամբ: Զբաղվելով ընդհանուր և անհետաձգելի սրտաբանության խնդիրներով, սրտի իշեմիկ հիվանդության բուժման և ախտորոշման ժամանակակից սկզբունքների մշակմամբ, սրտամկանի սուր ինֆարկտի և այլ հարցերով, Կ.Աղամյանը հատուկ ուշադրություն է դարձրել սրտաբանության մեջ կլինիկաֆունկցիոնալ ուղղությանը, սրտի ֆունկցիոնալ հարմարվողությանը, անբավարարության գարգացմանը սրտի ախտների և իշեմիկ հիվանդության ժամանակ, կլինիկական սրտաբանության մեջ կենսատիքմաբանական և իմունաբանական ուղղություններին և այլն:

Լինելով հանրապետությունում սրտաբանության կանխարգելիչ ուղղության նախածեռնող և կազմակերպիչ, Կ. Աղամյանը հատուկ վաստակ ունի Հայաստանում բազմօղակ սրտաբանական ծառայության ստեղծման մեջ: Կ.Աղամյանի ղեկավարությամբ սրտաբանական ծառայությունը անչափ արդյունավետ էր Հայաստանում սիրտ-անոթային հիվանդությունների վաղաժամ ախտորոշման, արդյունավետ բուժման, մահացության նվազման մեջ: Նրա ջանքերով կազմակերպված դիստանցիոն ախտորոշիչ կենտրոնի աշխատանքային փորձը ներդրվեց նույնպես Սովետական Միության մի շարք հանրապետություններում: Միրտ-անոթային հիվանդությունների ժամանակ ռադիոնուկլիդ հետազոտությունների եղանակների մշակման և ներդրման համար Կառլեն Աղամյանը իր գործընկերների հետ 1988 թ. արժանացավ Հայկական ԽՍՀ պետական մրցանակի:

Հետազոտությունների արդյունքները ամփոփված

են ավելի քան 350 գիտական աշխատություններում, 7 մենագրություններում, 6 գյուտերում, ավելի քան 50 գեկույցներում, որոնք ներկայացվել են սրտաբանների համաշխարհային և եվրոպական վեհաժողովներում: 1979 թ-ից ի վեր նա ղեկավարում է Հայաստանի սրտաբանների ընկերությունը, որը 1996 թ. անվանափոխվեց՝ դառնալով Հայաստանի սրտաբանների ասոցիացիա:

Կառլեն Աղամյանի գիտական գործունեության բարձրագույն գնահատականն է 1996թ. Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի ակադեմիկոս ընտրվելը:

Կառլեն Աղամյանը հանդիսանում է ոչ միայն պրակտիկ բժշկի և հետազոտողի, այլ ուսուցիչ-դաստիարակի միաժողովյալ փայլուն օրինակ: Նա պատրաստել է արժանավոր գիտական կադրեր. 16 բժշկական գիտությունների դոկտորներ և 26 քեկնաժուներ:

Առաջնորդվելով բարձր մակարդակի բժիշկների և գիտնականների պատրաստման անհրաժեշտությամբ Կառլեն Աղամյանը իր ամբողջ ուժերը ներդնում է Հայաստանի խոշորագույն սրտաբանական գիտական հիմնարկության տնօրենի, ազգային առողջապահության սրտաբանության ամբիոնի վարիչի, առողջապահության նախարարության էթիկայի կոմիտեի նախագահի և քերականային մասնագիտացված խորհրդի նախագահի աշխատանքներում: Նույն նպատակին են ծառայում կազմակերպվող արտագնա մտաշրջանները, սեմինարները, ինչպես նաև Հայաստանի սրտաբանների ասոցիացիայի աշխատանքները:

Աղամյանի ջանքերով բարձր մակարդակով կազմակերպված ասոցիացիայի գիտական վեհաժողովներին իրենց ակտիվ մասնակցությունն են բերում հայրենական և արտասահմանյան խոշոր գիտնականները, հանրապետության բժշկական լայն հասարակությունը: Այդ վեհաժողովները մասնագետների համար հիանալի գիտաաշխատիկ դպրոց են, որոնք նպաստում են Հայաստանում մոր, արդյունավետ մշակումների ներդրմանը:

Ակադեմիկոս Կ. Աղամյանը իր պրակտիկ սրտաբանի և գիտնականի լայն մտահորիզոնը օգտագործում է իր աշխատանքում, գիտական հրատարակումներում: Սկսելով «Արյան շրջանառություն» պարբերականի խմբագրական խորհրդի

անդամից, այժմ նա շարունակում է աշխատանքն այս ասպարեզում որպես «Հայաստանի բժշկագիտություն» հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալ, «Սրտաբանություն», «ԱՊՀ սրտաբանություն», «Ռուսաստանի սրտաբանական տեղեկագիր», «Հայկական բժշկական ռեֆերատիվ տեղեկագիր», «Արյուն» և այլ պարբերականների խմբագրական կոլեգիաներում:

Կառլեն Աղամյանի ակտիվ գործունեությունը օգնում է նրան միշտ լինել արդի սրտաբանության զարգացման խաչներուկներում՝ նպաստելով իր երկրում սրտաբանության բոլոր ճյուղերի զարգացմանը:

Այս տաղանդավոր, անկեղծ և հմայիչ մարդու համար բնորոշ են եռանդը և պարզությունը, բժշկի գերազանց ինտուիցիան, անմնացող նվիրումը գործին:

Լինելով իր երկրի և իր ժողովրդի ջատագով, նա խորը հարգանք է տածում այլազգիների հանդեպ և միշտ գտնում է նրանցից սովորելու ինչ-որ կարևոր բան:

Իր ողջ գիտակցական և գիտական կյանքի ընթացքում նրան գորավիզ է իր ընտանիքը: Իր կնոջ՝ նույնպես բժշկի հետ նրանք մեծացրել և դաստիարակել են երկու դուստր և որդի, որոնք արդեն արժանապատիվ, հարգված մարդիկ են: Իսկ այժմ սիրելի թոռնիկներն են դաստիարակվում որպես ընտանեկան ավանդույթների արժանավոր շարունակողներ:

Կառլեն Աղամյանի ծառայությունները ժողովրդի, պետության և բժշկագիտության առջև արժանացել են բարձր գնահատականի: Նրան շնորհել են «Ժողովուրդների բարեկամության» և «Մխիթար Հեռացի» շքանշաններ, բազմաթիվ պատվոգրեր: Նա ընտրվել է Սրտաբանների Եվրոպական Ընկերության պատվավոր անդամ և Գլխավոր ասամբլեայի անդամ: Նա շրջապատված է գործընկերների և աշակերտների հարգանքով, հիվանդների սիրով, հայրենիքի մեծաբանքով:

Գնահատելով Կառլեն Աղամյանի 70-ամյա կյանքի ուղին, կարելի է ամենայն վստահությամբ ասել, որ այն արժանավոր Գիտնականի, Զաղաքացու, Մարդու ուղի է:

Հանրապետության լայն հասարակայնությունը, ՀՀ ԳԱԱ նախագահությունը և «Հայաստանի բժշկագիտություն» հանդեսի խմբագրական կազմը ջերմորեն շնորհավորում են սիրելի Կ.Աղամյանին, մաղթելով նրան առողջություն և նորանոր ստեղծագործական հաջողություններ: